ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

31.10.2014թ.
227-ի 9

Սպիտակ համայնքի ղեկավար
պարոն Գագիկ Սահակյանին

## Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սահակյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2014թ.-ի 1-ին կիսամյակի գործուղումների ցանկը եւ յուրաքանչյուր գործուղման համար համայնքային բյուջեից ծախսված գումարի չափը,
2. 2014թ.-ի 1-ին կիսամյակում Սպիտակ քաղաքում ասֆալտապատման աշխանքների համար համայնքային բյուջեից ծախսված գումարի հաշվետվությունը,
3. Սպիտակ քաղաքում ասֆալտապատման աշխանքների իրականացման համար հայտարարված մրցույթի մասնակիցների տվյալներն ու մրցույթի քաղվածքը:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան